ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԳՄՄՆ «ՄԱՐՏՈՒՆՈՒ Տ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ

ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ »ՊՈԱԿ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ Առանց պատմելու դասավանդման ռազմավարության կիրառումը նոր նյութի ուսումնասիրության փուլում

ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԱՅՐԸ՝ Վարդենիս

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հասմիկ Բեյբության

ՈՒՍՈՒՑԻՉ՝ Մարտունիկ Հովագիմյան

ԴՊՐՈՑ՝ Վարդենիսի Էդ. Պողոսյանի անվան համար 2 հիմն. դպրոց

2022թ.

ՎԱՐԴԵՆԻՍ

Բովանդակություն

Ներածություն 3
Գրական ակնարկ 4
Փորձարարական հետազոտություն 5
Խմբի նկարագիր 8
Հետազոտության ընթացք 8
Փորձարարական դաս 1 9
Փորձարարական դաս 2 11
Փորձարարական դաս 3 13
Տվյալների մշակում և վերլուծություն 15
Եզրակացություն 17
Օգրագործված գրականության ցանկ 18
Հավելված
Դասապլան 1
Դասապլան 2

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

<<Կրթությունն ազատության ոսկե դուռը բացելու բանալին է >>

Ջորջ Վաշինգտոն

Կրթակարգը գիտամանկավարժական ակտիվ և անընդհատ գործունեության առաջ մղիչ և խթանիչ գործոն է: Հարափոփոխ կյանքը թելադրում է իր պայմանները և ժամանակի պահանջներին դրա ներդաշնակեցման անհրաժեշտությունը մեզ ստիպում է լինել հետազոտող, ստեղծագործող և իրատես:

Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման հետ զուգընթաց մեծանում է պահանջները մարդկային բարձր որակների և արժեհամակարգի ձևավորման գործում: Արդի պայմաններում ինքնագնահատված և բարձր արժեհամակարգ ունեցող անձը պահանջված է, որը կարող է դուրս մղել աշխարհից՝ հասարակությունից թերարժեքությունը և ապագա սերունդների համար ձևավորել ուրույն մտածելակերպ ունեցող անձ: Այն միանգամայն հնարավոր է դարձնելու դպրոցի առաքելության ամբողջական և լիարժեք իրականացումը: Ուստի արդի ժամանակներում անհատներին համակողմանիորեն ճանաչելու և նկարագրելու նպատակով նրանց վերաբերյալ տեղեկությունների համադրման ծավալուն գործընթաց է կառուցողական մոտեցումը:

Հետազոտական աշխատանքի նպատակն է աշխարհագրություն առարկայի դասավանդման միջոցով խթանել աշակերտների երևակայության ներուժը,ակտիվացնել սովորողների ինքնագործունեությունը,զարգացնել ստեղծարարական մտածողությունը, ինքնուրույն աշխատելու կարողությունը, հնարամտությունը, իմացությունը և պատրաստել արդի ժամանակներին համապատասխան աշխարհայացքով օժտված մրցունակ անհատ:

Նպատակին հասնելու համար հետազոտական աշխատանքի հիմքում դրել եմ և լուծման համար առաջադրել հետևյալ փոխկապակցված խնդիրները՝

1.Զարգացնել սովորողների մեջ ինքնուրույն աշխատելու կարողություն

2.Համագործակցային աշխատանքի շնորհիվ հասնել նպատակին

3.Ձևավորել սովորողների մոտ նորագույն մեթոդներով աշխատել:

ԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Համագործակցային մանկավարժության նպատակն այնպիսի մեթոդների կիրառումն է,որոնք ուսման գործընթացը վերածում են սոցիալական շփման:Աշխարհը փոխվում է

սրընթաց արագությամբ և անկանխատեսելիորեն: Տեղեկատվությունն ու գիտելիքները ձևավորում են մեր աշխարհայացքը: Այն ամենը ինչը նախկինում թվացյալ հավերժական և անփոփոխ էր այսօր հարաբերական է, ավելի շուտ սխալ: Մենք կրթության ոլորտի մարդիկ գիտակցում ենք ,որ դասավանդման և ուսուցման հնացված ձևերը չեն կարող այլևս ստեղծել և զարգացնել գիտելիքներ և հմտություններ,որոնք անհրաժեշտ են արդի քաղաքացուն բարեկեցիկ կյանքով ապրելու: Հետևաբար ինչպես Հայաստանում,այնպես էլ ամենուր դպրոցում անհրաժեշտ են դասավանդման և ուսուցման այլընտրանքային նոր մոտեցումներ: Դասավանդման խնդիրների լուծման նպատակով համագործակցային ուսուցումը ուսուցիչների կողմից փորձարկվող միջոցներից մեկն է: Համագործակցային ուսուցումը այլընտրանքային մանկավարժական մոտեցում է,որը ենթադրաբար խմբային աշխատանքի համագործակցության նոր մշակույթ է:Այն ունի կարևոր նախապայման՝ապահովել խմբի անդամների միջև դրական փոխկախվածությունը: Համագործակցային ուսուցման տարրերը հինգն են ըստ Ջոնսոնների՝ դրական փոխկախվածություն,խթանող փոխազդեցություն,անհատական հաշվետվություն և պատասխանատվություն,սոցիալական հմտություններ,խմբային գործընթաց: Հետագայում Պասսի Սալբերգի կողմից ավելացվեց փոխներգործուն /ինտերակտիվ/ առաջադրանքը,որպես համագործակցային ուսուցման վեցերորդ տարր:Այսպիսով կարող ենք ասել,որ համագործակցային ուսուցումը թողնում է միմիայն դրական ազդեցություն:

ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԴԱՍ

Հետազոտական աշխատանքի համար ընտրել եմ 9-րդ դասարանը:

Սովորողների հետաքրքրությունը մեծացնելու նպատակով ընտրեցի այս դասարանը, որպեսզի համագործակցային մեթոդի միջոցով կարողանամ սովորողների մեջ զարգացնել հմտություններ գործնական իրավիճակներում,առաջացած խնդիրները լուծելու և ուսումնական գործունեության մեջ ներգրավելու նպատակով,ինչպես նաև սովորողների մոտ զարգացնել ստեղծարարությունը և ինքնուրույն աշխատելու կարողությունը:

Հետազոտական աշխատանքս իններորդ դասարանում Հայաստանի աշխարհագրություն առարկայի շրջանակներում ուսումնասիրվող Սևանա լիճ թեման է:Թեմայի ուսումնասիրման համար իմ առջև դրել եմ հետևյալ նպատակները՝

1. ներկայացնի Սևանա լճի աշխարհագրական դիրքը,տեղադրությունը
2. իմանա Սևանա լիճ թափվող գետերը
3. նկարագրի Սևանա լճից սկիզբ առնող Հրազդան գետի ջրհավաք ավազանը
4. գծի և ուրվագծի Սևանա լճի քարտեզը
5. սովորի ջրային շրջափուլին առնչվող հիմնական եզրույթները
6. բացահայտի ջրային շրջափուլերի և ջրհավաք ավազանի կապը
7. բացատրի այն գործոնները,որոնք նպաստում են Սևանա լճի ջրային դրական հաշվեկշռին
8. ծանոթանա հայ և օտարազգի արվեստագետների՝ Սևանը պատկերող ստեղծագործություններին /երգեր,նկարներ և ալն/
9. գծի ջրի շրջափուլի, ջրային ավազանի հաշվեկշռի և ջրային ավազանի աղտոտման սխեման
10. սովորի աղտոտման պատճառները և ջուրը աղտոտումից պաշտպանելու ուղիները
11. բացատրել՝ հայ ժողովրդի կյանքում Սևանա լճի նշանակությունը՝ որպես էկոլոգիական ,տնտեսական և մշակութային արժեք

Նպատակներից ելնելով ակնկալում եմ հետևյալ վերջնարդյունքները՝

1. կկարողանան Սևանա լճի աշխարհագրական դիրքը և տեղադրությունը ներկայացնել

2. կկարողանա թվարկել և քարտեզի վրա ցույց տալ Սևանա լիճ թափող գետերը
3. կնկարագրի Սևանա լճից սկիզբ առնող միակ Հրազդան գետի ջրհավաք ավազանը
4. կկարողանա ուրվագծել և գունաներկել Սևանա լճի քարտեզը
5. կսովորի ջրային շրջափուլին առնչվող հիմնական եզրույթները
6. կբացահայտի ջրային շրջափուլերի և ջրհավաք ավազանի կապը
7. կբացատրի այն գործոնները,որոնք նպաստում են Սևանա լճի ջրային դրական հաշվեկշռին
8. կծանոթանա ու կներկայացնի հայ և օտարազգի արվեստագետների՝ Սևանը պատկերող ստեղծագործություններին /երգեր,նկարներ և ալն/ :Կստեղծի արվեստի սեփական գործը /բանաստեղծություններ,էսսեներ/
9. կգծի ջրի շրջափուլի, ջրային ավազանի հաշվեկշռի և ջրային ավազանի աղտոտման սխեման
10. կկարողանա աղտոտման պատճառները գտնել և ջուրը աղտոտումից պաշտպանելու ուղիները կներկայացնի
11. կբացատրի ՝ հայ ժողովրդի կյանքում Սևանա լճի նշանակությունը ՝ որպես էկոլոգիական ,տնտեսական և մշակութային արժեք
Հետազոտական աշխատանքում սովորողների գործնական կարողությունները և հմտությունները ձևավորելու նպատակով առաջադրել եմ գործնական աշխատանքներ,որոնք դյուրացնում են Հայաստանի աշխարհագրություն առարկայի յուրացումը:
Ըստ սովորողների ունակությունների առաջադրված նյութը՝ հետազոտական, գործնական բաժանում եմ չորս խմբերի՝
. վերարտադրողական /Ինչ է սովորելը և ինչ է կարողանում անել սովորողը/
2. մասամբ որոնողական /երբ սովորողը ոչ միայն սովորել է և ինչ կարող է անել, այլև պետք է կատարի լրացումներ և լուծի իրեն տրված խնդիրները/
3. ինքնուրույն վերլուծելու կարողություն /երբ սովորողը ինքը պետք է ինքնուրույն կամ խմբի անդամների հետ լուծում գտնի առաջադրված խնդիրների համար՝ցուցադրելով կարողունակությունների զարգացման որոշակի մակարդակ/
4. ինքնուրույն որոշումներ կայացնող /երբ սովորողը համագործակցության

արդյունքում կայացնում է որոշում/
Գործնական աշխատանքի միջոցով երեխաների մոտ կարող է առաջանալ ինքնուրույն դատողություն անելու կարողություն,հետաքրքրության ձևավորում,քննարկումներ անելու կարողություն:
Կազմակերպված աշխատանքների շնորհիվ աշակերտը կկարողանա ինքնուրույն որոշումներ կայացնել,գնահատել սեփական աշխատանքի ուժեղ և թույլ կողմերը:Աշխատանքի համար նպաստավոր պայմանների ստեղծումը հանգեցնում է աշակերտների ինքուրույն ձեռք բերված գիտելիքների քանակի ավելացմանը,հետաքրքրությունների մեծացմանը,հատկապես նրանց համար,ովքեր սովորական դասապրոցեսում ակտիվություն չեն ցուցաբերում:Փորձել եմ իմ ուսուցման գործընթացն այնպես կառուցել, որ աշակերտը ինքնակատարելագործվի,պատասխանատու լինի,իր առջև դրված խնդիրը լուծելու ունակություն ունենա:
Հետևաբար ես նպատակաուղղված կառուցեցի իմ գործունեությունը աշխարհագրության դասերին,աշակերտների ինքնուրույնության ձևավորման, հետաքրքրասիրությունների մեծացման համար:
Աշխարհագրությունը որպես բնագիտական առարկա,ունի յուրահատուկ հնարավորություններ զարգացնելու անհատականության այնպիսի հատկություններ,ինչպիսիք են իմանալու և մտածելու արվեստը,հաղորդակցման և խոսքի արվեստը և ինքնահիրացման միտումը:
Կազմել եմ հայտորոշիչ թեստ,որ սովորողների գիտելիքները Սևանա լիճ թեմայի վերաբերյալ ստուգեմ: Այս թեստի միջոցով հստակեցվել է ուսուցման ընթացքում սովորողների կարիքները և բարելավել ուսուցման գործընթացը:Սովորողների գիտելիքները Սևանա լիճ թեմայի վերաբերյալ հարստացնելու,խոսքի ,բառապաշարի զարգացման,ինքնուրույն վերլուծելու կարողությունները զարգացնելու նպատակով հանձնարարել եմ տանը դիտել դասի հետ առնչվող <<Սևանա լիճը Հայաստանի մարգարիտ>> վավերագրական ֆիլմը:Ֆիլմի միջոցով սովորողները կկարողանան ինքնուրույն դատողություն անել և նկարագրել Սևանա լճի կենդանական աշխարհը և ձկնատեսակները <<ՀՀ-ի Կարմիր գրքում>> գրանցված:Դասարանում սովորողները ներկայացրեցին իրենց աշխատանքները կատարեցինք քննարկում և

գնահատում:Կատարվել են նաև ուրվագծային քարտեզով աշխատանք հանձնարարվել է,որ աշակերտների մի խումբը կատարի Սևանա լիճ թափվող որևէ գետի ջրհավաք ավազանի քարտեզը աշխատանքը,իսկ մյուս խումբը նշի Սևանա լիճ թափվող գետերը:

ԽՄԲԻ ՆԿԱՐԱԳԻՐ

Հետազոտությունս անցկացրել եմ Վարդենիսի համար 2 հիմն. դպրոցի 9-րդ դասարանում:Դասարանում սովորում են 19 աշակերտ,որոնցից 9-ը աղջիկներ են,իսկ 10-ը՝ տղաներ: Շատ համերաշխ դասարան է:Լավ են սովորում 6 աշակերտ,ունեն միջին մակարդակի գիտելիքներ 7 աշակերտ,իսկ մյուսները համեմատաբար թույլ են սովորում:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔ

Հետազոտական աշխատանքիս ընթացքը սկսել եմ հետևյալ թեմայից՝ Սևանա լիճ և հետևյալ ենթաթեմաներից՝

1. Հայաստանի մարգարիտ Սևանա լիճը /դաս 1/

2. Ջրային հաշվեկշիռ. Սևանա լիճ /դաս 2/

3. Էկոհամակարգ. Սևանա լիճ /դաս 3/

4. Դասընթացի կրկնություն,թեմատիկ գրավոր աշխատանք /դաս 4/

ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԴԱՍ 1

Հայաստանի մարգարիտ Սևանա լիճը

Դասի հիմնական նպատակն է ,որ սովորողները կարողանան ընդլայնել գիտելիքները Սևանա լճի տեղադրության, աշխարհագրական դիրքի վերաբերյալ, քարտեզի վրա ցույց տան Սևանա լիճը, լիճ թափվող գետերը, Սևանա լճից սկիզբ առնող Հրազդան գետի ջրհավաք ավազանը,ինչպես նաև ուվագծային քարտեզում Սևանա լիճը* և նշեն առափնյա երիզող լեռները,գունաներկեն (հավելված 1):

Խթանմա փուլ-Դասը սկսեցի Հայաստանի քարտեզի և աշխարհագրական անունների ներկայացմամբ,այնուհետև արեցի հետևյալ հարցադրումը .<<Ինչ գիտեք կամ կարծում եք գիտեք Սևանա լճի մասին>>:Սովորողների մտքերը վեր հանելով փորձում եմ հասնել նպատակիս ,խմբավորման միջոցով գրատախտակին գրանցելուց հետո, փորձում եմ սովորողներին ներգրավվել ազատ, ինքնուրույն մտածելու, կողմնորոշվելու և մտքերը անկաշկանդ արտահայտելու դասապրոցեսում,այնուհետև տրամադրում եմ տեքստը՝ <<Հայաստանի մարգարիտ>> և բացատրում թե ինչպես կարդալ տեքստը՝ միաժամանակ նշումներ անելով:ԳՈՒՍ մեթոդի օգնությամբ վեր հանելով սովորողների ունեցած տեղեկատվությունը և թե ինչ կարողացան սովորել տեքստից

V - այս տեղեկատվությունն արդեն հայտնի է ինձ

+ - ես այս տեղեկատվությունը նոր եմ սովորել տեքստից

? - ես հարց ունեմ

Այնուհետև նրանք պետք է կազմեն աղյուսակ*.

Իմաստի ընկալման փուլ - Դասարանը բաժանեցի զույգերի մտքերի փոխանակության համար:Այս մեթոդի օգտագործմամբ փորձեցի սովորողների մոտ մեծացնել հետաքրքրության աճը:Սովորողները ընթերցված հատվածի արդյունքները կներկայացնեն զույգին, կհամեմատեն խմբավորման արդյունքների հետ և կպատասխանեն միմյանց հարցերին:

Կշռադատման փուլ - Ամփոփիչ աշխատանքը կլինի յուրաքանչյուր սովորողի գծած աղյուսակը և ըստ դասի ու խմբավորման ընթացքում նրանց պատասխանների

արդյունքների ամփոփման գործընթացի մասնակցությունը:Անհրաժեշտության դեպքում ես կպատասխանեմ և կուղղորդեմ ճիշտ պատասխանների ամփոփմանը: Տնային առաջադրանք՝ աշխատանք ուրվագծային քարտեզով,պատասխանել հետրայալ հարցին.<<Որտեղից է հայտնվել Սևանա լճր ջուրը և ինչու է այն քաղցրահամ>>:

ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԴԱՍ 2

Ջրային հաշվեկշիռ . Սևանա լիճ

Դասի նպատակն է,որ սովորողները ձեռք բերեն հաշվեկշռի մասին պատկերացում, իմանան ինչ է ջրային հաշվեկշիռը, դրական և բացասական հաշվեկշիռներ, կարողանան ջրային հաշվեկշռի ավազանը (ՋՀԱ) կառուցել և ուսումնասիրել:

Խթանման փուլ - կիրառել եմ մտքերի տարափ մեթոդը՝ առաջարկեցի սովորողներին գրատախտակին գրանցել Լիճ հասկացությունը,այնուհետև յուրաքանչյուր սովորող մոտեցավ և գրեց ,թե ինչ գիտի ինքը այս հասկացության վերաբերյալ,որից հետո կատարեցինք խմբավորման գործընթացը:Ավարտին հասցնելուց հետո սովորողները սպասում էին իմ տեղեկատվությանը:Գրատախտակին գրեցի դասի նոր տերմինները,բառերը,որոնք համարվում են բանալի բառեր նոր ուսումնասիրվելիք նյութի .

- հաշվեկշիռ

- ջրային հաշվեկշիռ

- դրական հաշվեկշիռ

- բացասական հաշվեկշիռ

Այնուհետև գրատախտակին գծում եմ սխեմա և բացատրում ,թե ինչպես ջրային հաշվեկշռի ավազան (ՋՀԱ) պատրաստել:

Դասարանը բաժանեցի խմբերի 3 կամ 4 հոգանոց,յուրաքանչյուր խմբին տվեցի նախապես պատրաստված մեկ պլաստմասսայե աման և երկու պլաստմասսայե խողովակ,սովորողները իմ ուղղորդմամբ փորձեցին գծագրել և կառուցել ջրային հաշվեկշռի ավազան պարզաբանելով թե ինչպես է աշխատում համակարգը:

Իմաստի ընկալման փուլ - Սովորողների ուշադրությունը կրկին հրավիրելով ջրային հաշվեկշռի վրա,հանձնարարում եմ համեմատել ջրային հաշվեկշռի սխեման և ավազանը:Այնուհետև հանձնարարում եմ ջրային հաշվեկշռի ավազանի հետ կապ ունեցող օրինակներ բերել իրական կյանքից:

Գաղափարների և հիմնական եզրույթների սահմանումների փոխանակման համար բոլոր խմբերին քաջալերելով հասնում եմ նրան ,որ այն սովորողները ովքեր անվստահ են իրենց կարողությունների վրա ներգրավվում են խմբային այս հետաքրքիր աշխատանքում, իսկ կայուն գիտելիքներ ունեցող սովորողը աշխարհագրություն առարկայից կստանա հնարավորություն գիտական կապերի նեղ շրջանակից դուրս գալու:

Կշռադատման փուլ - Սովորողները իրենց տետրերում աշխարհագրության գրում են դասին առնչվող իրենց մտքերը և մտորումները,դիտարկումների և վերլուծության ավարտուն ցիկլով: Նրանք պետք է կանխատեսումներ անեն և ընդհանուր պատկերացում կազմեն ,թե ավազանն ինչպես է գործում, և ինչ է նշանակում դրական և բացասական հաշվեկշիռներ:

Որպես տնային առաջադրանք տվել եմ հետևյալ հարցերը.

- Ինչու է Սևանա լճի համար կարևոր ջրային դրական հաշվեկշիռը:
- Ինչ ազդեցություն ունի ջրային բացասական հաշվեկշիռը Սևանա լճի վրա:
- Ինչ ազդեցություն ունի ջրային բացասական հաշվեկշիռը շրջակա միջավայրի և համայնքի վրա:

Դասը գնահատեցի ռուբրիկի* միջոցով, գնահատման համար շեշտադրված է մոդելի կազմումը,կանխատեսումների կատարումը,դիտարկումը և հետախուզումը:Այստեղ տեղին է հիշել մեծն Էյնշտեյնի դիտողությունը՝ << խնդրի ձևակերպումը հաճախ ավելի կարևոր է, քան դրա լուծումը>>:

ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԴԱՍ 3.

Էկոհամակարգ. Սևանա լիճ

Հաշվի առնելով Սևանա լճի բնապահպանական կարևոր նշանակությունը ՝ լճի և դրա առափնյա գոտու բնապահպանական , սոցիալական , տնտեսական գործառույթների համալիր և միասնական պլանավորման և իրականացման նպատակով դեռևս 1978 թ. ՀՀ կառավարության թիվ 125 որոշմամբ ստեղծվեց “Սևան” ազգային պարկը : Պարկի տնօրինությունն իրականացնում է Սևանա լճի և դրա առափնյա գոտու (Սևանա լճի հատակից ազատված շուրջ 25.000 հա ցամաքային տարածքները) պահպանությունը ,հանգստի կազմակերպման պայմանների ստեղծումը , անտառտնտեսավարման կազմակերպումը և Սևանա լճում արդյունագործական ձկնորսության կազմակերպումը:

Դասի նպատակն է ,որ սովորողները իմանան և մեկնաբանեն Սևանա լճի նշանակությունը հայ ժողովրդի ,Հայաստանի ու Կովկասի տարածաշրջանի շրջակա միջավայրերի համար, բացահայտեն Սևանա լճի առջև ծառացած հիմնախնդիրները և առաջադրեն լուծումներ, բնութագրեն Սևանա լճի աշխարհագրական դիրքը, տեղադրությունը և պարամետրերը: Կազմեն Սևանա լճի շուրջ ծավալված կարևոր պատմական իրադարձությունների ժամանակացույց, բացատրեն ՀՀ-ի տնտեսության զարգացման համար Սևանա լճի ջրային պաշարների օգտագործման նշանակությունը:

Խթանման փուլ - Որպես խթան դասի օգտագործել եմ շրջագայություն պատկերասրահում մեթոդը,դասարանը բաժանել եմ չորս խմբերի՝ <<Աշխարհագրագետների>>,<<Պատմաբանների>>,<<Բնապահպանների>> և <<Գրականագետների>>, ըստ խմբերին համապատասխանաբար տվել եմ հանձնարարություններ հետազոտական:

Գրատախտակին ամրացրել եմ Սևանա լճի նկարը՝ վերցված քարտեզից, խորհրդանշելով դասի հիմնական նպատակը, ՀՀ-ի ֆիզիկական քարտեզը, սովորողների նկարազարդումները:
Իմաստի ընկալման փուլ - Հետազոտական աշխատանքներն ավարտելուց հետո խմբերը ներկայացնում են իրենց աշխատանքները հետազոտական՝ <<Աշխարհագրագետները>> ներկայացնում են Սևանա լճի դիրքադրությունը և քարտեզում ցույց տալիս,պատմում են ռելիեֆի ,մասին,քարտեզում ցույց են տալիս Սևանա լիճը երիզող լեռները, լիճը սնուցող գետերը թվարկում և ցույց են տալիս քարտեզի վրա,ներկայացնում են լճից սկիզբ առնող Հրազդան գետի մասին տեղեկատվություն,ինչպես նաև բացատրում նրա նշանակությունը և ներկայացնում են լճի էկոլոգիական նշանակությունը մեզ համար :
<<Պատմաբանների>> խումբը ներկայացնում է իր իսկ հավաքագրած նյութերը Սևանա լճի շուրջ ծավալված կարևոր պատմական իրադարձությունները,ներկայացնում են տեղեկություններ պատմական Սևանա լճի վերաբերյալ:
<<Բնապահպանները>> բարձրացնում են իրենց ձայնը ահազանգ հնչեցնելով լճին սպառնացող վտանգի մասին՝ Մ. Ղուկասյան<<ՈՒր է կղզյակն Սևանա>> , ներկայացնում են այն թույլ տրված սխալները,որ աղետ դարձան լճի համար:
<<Գրականագետները>> ցույց են տալիս գիտական և գեղարվեստական խոսքի առանձնահատկությունները, տարբերությունները, արտասանում են բանաստեղծություններ Սևանա լճի վերաբերյալ, պատմում են գեղարվեստական ստեղծագործություններից հատվածներ, որոնք նկարագրում են գեղատեսիլ մեր կապուտաչյա Սևանի հմայքը՝ Վ. Անանյանի <<Սևանի ափին>> աշխատությունից անում են մեջբերումներ:
Միաժամանակ կատարվում է գիտական և գեղարվեստական խոսքի համեմատություն՝ Վենի դիագրամի միջոցով:
Կշռադատման փուլ - Ամփոփելով խմբերի ներկայացրած աշխատանքները ստացանք մեծ բավականություն,վերլուծվեց և քննարկվեց հետազոտական աշխատանքները, խմբերի մասնակիցները ձեռք բերեցին գիտելիքների հսկայական պաշար Սևանա լճի մասին:

ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Յուրաքանչյուր հետազոտական աշխատանք ունի վերլուծության առանձնահատկություններ:Աշխատելով 9-րդ դասարանի հետ, որտեղ սովորում են տարբեր ընդունակությունների տեր աշակերտներ ես ինձ համար բացահայտեցի մի շարք խնդիրներ ,որոնց լուծման համար իմ առջև դրել էի նպատակներ:

Առաջին դասի ժամանակ ես պարզեցի ,որ կա ինքնուրույն աշխատելու, ինքնուրույն դրսևորվելու աշակերտներ:Այդ նպատակով որոշեցի կիրառել. դասի ոչ ավանդական ձևերը նրանց մոտ ստեղծագործական կարողությունները, երևակայությունը, կապակցված խոսք կազմելու,վերարտադրելու կարողությունները զարգացնելու համար:

Յուրաքանչյուր դասից հետո աշակերտների մոտ նկատվել են ակտիվություն, ինքնուրույն դրսևորվելու առաջընթաց,նրանք սկսեցին ավելի ազատ շարադրել իրենց մտքերը:Կարողացան հեշտությամբ աշխատել բնագրի հետ:Գործնական աշխատանքի շնորհիվ նրանց մոտ ձևավորվել է կապակցված խոսք կազմելու,վերարտադրելու կարողություններ:Աշակերտների համար մեծ հետաքրքրություն էր ներկայացնում ֆիլմի դիտումը,աշխատանքը դրա շուրջ, քարտեզների հետ տարվող աշխատանքը:Սահիկաշարի պատրաստումը նպաստեց նրան,որ երեխաները ավելի ոգևորվեցին;Ուրախալի էր,որ մրցակցում էին նաև այն աշակերտները, ովքեր ավելի պասիվ էին:Նրանք ամեն ինչ անում էին,որ կարողանան ավելի մեծ արդյունքի հասնեն: Ակտիվ էին,նպատակասլաց,որի շնորհիվ նրանց մոտ ավելի մեծ աճ գրանցվեց: Բոլոր աշակերտների հետ կատարվել են գործնական աշխատանք նրանց ինքնուրույն մտածողությունը զարգացնելու,կապակցված խոսք կազմելու,բառապաշարը հարստացնելու նպատակով:Այդ աշխատանքների կատարման տեքստի բովանդակության վերարտադրման համար աշակերտները գնահատվել են:Աշակերտների արդյունքների հիման վրա կարող եմ նշել,որ հասել եմ

իմ առջև դրված նպատակների իրագործմանը և վերջնարդյունքների կատարմանը:Որպես սովորողների երևակայական ներուժ, ինքնուրույնության ձևավորման բացահայտումը աշխարհագրության դասի միջոցով փորձարարական էր և շատ հետաքրքիր:

Կատարված աշխատանքի համատեքստում կիրառված մեթոդները ճիշտ էին ընտրված և ծառայեցին նպատակի իրականացմանը:Կատարված աշխատանքների՝գրավոր աշխատանքներ,առաջադրանքներ և այլն, ինչպես նաև գնահատման արդյունքների հիման վրա կարող եմ պնդել,որ աշխարհագրության դասընթացը զարգացնում է սովորողների ինքնուրույն դատողություն անելու կարողությունը,համագործակցային ձևով աշխատելու ունակությունը:Գնահատման արդյունքներով պայմանավորված սովորողների մոտ գիտելիքները գնահատել եմ դրական,որը առաջադրանքի ռուբրիկի միջոցով ցույց եմ տվել:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ելնելով տեսական վերլուծությունից և փորձարարական հետազոտական արդյունքների ամփոփումից՝ եկա հետևյալ եզրահանգմանը.

Ցանկացած առարկայի շրջանակներում այսօր խնդիր է դպրոցահասակ երեխաների մոտ զարգացնել ինքնուրույն գործելու կարողությունը, վերլուծելու, ստեղծագործելու ունակությունը, որպեսզի ունենա ուրույն մտածողություն, վառ երևակայություն, ինքնազարգացման առաջընթացի մեծ ձգտում: Այսօր արդի կրթության նպատակն է ձևավորել համագործակցային հմտություններ աշակերտների մոտ, նոր մեթոդներով աշխատելու ունակություն և ինքնուրույն աշխատելու կարողություն: Ժամանակակից մեթոդները տալիս են մեզ այդ հնարավորությունները: Ստեղծագործական ներուժ ունեցող սովորողները տարբերվում են իրենց մտածելակերպով, ինչպես նաև իրենց տարիքի համար միջինից բարձր ինտելեկտով:

Այսպիսով կատարված հետազոտական աշխատանքից եկա այն համոզման,որ աշխարհագրության դասերը նպաստում են սովորողներին անելու ինքնուրույն դատողություններ, նպաստում են կարողունակությունների բացահայտմանը, համագործակցային եղանակով աշխատելու ունակությունը, ձևավորում քննադատական մտածողություն, վերլուծելու ունակության զարգացմանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1.”Սևանա լիճ հիմնահարցեր և գործողությունների ռազմավարություն “ , Միջազգային
Գիտաժողովի նյութեր Սևան , Հայաստան , 13-16 Հոկտեմբերի 1996 թ.
2. “Հայաստանի բնության հատուկ պահպանվող տարածքները “ , Նազիկ Խանջյան , Երևան 2004թ.
3.” ՀՀ ջրային պաշարների կանխատեսումը,գնահատումը և համալիր կառավարումը”,
Վլադիմիր Մովսիսյան
4.”Սևանա լճի բնապահպանական գործողությունների ծրագիր” , Երևան 1998թ.
5. Ազգային զեկույց “ Շրջակա միջավայրի վիճակը Հայաստանում 2002 թ.”
6.”ՀՀ Էկոլոգիական իրավունք“ (Նորմատիվ իրավական ակտերի ժողովածու) , Երևան 2002թ.
7.”Նախարարական զեկույց 2003 – 2005թթ.”
8.Հոդված՝ <<Հայաստանի մարգարիտ>>,Վ.Պողոսյան,Գ. Հովհաննիսյան,Երևան 2000թ.
9.<<Հասկացությունների ցանց>> Յան Սանդերս,աշխատություն կառուցման սկզբունքներ
10.Բենջամին Բլում 1956 թ. <<Բլումի գնահատման սանդղակ>>
11.Ռալֆ Թայլեր1900 թ.<<Կրթակարգի պլանավորման գծային մոդել>>
12.Ջեյմս Ռ. Սթոքիարդ (2001 թ.) Մեթոդներ և միջոցներ միջին դպրոցի բնագիտական առարկաների համար
13.Մերիլենդի գնահատման կոնսորցիում,Ջեյ Մըքթայգ, 1997թ.
14. Ա. Հովհաննիսյան,Կ. Հարությունյան,Ս. Խրիմյան և ուրիներ
<<Համագործակցային ուսուցում>> Երևան. <<Անտարես>> հրատ. 2006
15.Վ. Շատալով, Ն. Գուզիկ <<Համագործակցային մանկավարժություն>> 2006

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Հավելված 1. Գիտեմ	Ուզում եմ իմանալ	Սովորեցի
Թեմայի վերաբերյալ	Հարցերը	Դասի արդյունքում
աշակերտի գիտեցածը		սովորածը



Գնահատման ռուբրիկ դաս -2 1	2	3
Առաջադրանքը մասամբ է կատարված	առաջադրանքը հիմնականում կատարված է	առաջադրանքը կատարված է լիովին
համագործակցային աշխատանք կատարելու հմտությունները բավարար չեն	համագործակցային աշխատանք կատարելու հմտությունները հիմնականում բավարար են	համագործակցային աշխատանք կատարելու հմտությունները բավարար են
Աշխատանքը ներկայացնելու կարողությունները բավարար չեն	Աշխատանքը ներկայացնելու կարողությունները բավարար են	Աշխատանքը ներկայացնելու կարողությունները գերազանց են
1 միավոր	2 միավոր	3 միավոր

Օրվա դասի պլան 1 ամիս, ամսաթիվ՝ 07.03.2022թ.

Ուսուցիչ՝ Մ.Հովագիմյան	Աշխարհագրություն
Դասարան և կիսամյակ	1-ին կիսամյակ 9-րդ
Խմբի նակարագիր	Դասարանում սովորում են 19 աշակերտ,որոնցից 9-ը աղջիկներ են,իսկ 10-ը՝ տղաներ:
Թեմայի գլուխ և թեմա	Սևանա լիճ. <<Հայաստանի մարգարիտ Սևանա լիճը>>
Օգտագործվող նյութեր	Դասագիրք-Հայաստանի աշխարհագրություն /հեղինակներ՝ Մ. Մանասյան,Ա. Հովսեփյան-Երևան՝ 2020/:ՀՀ ֆիզիկական քարտեզ,Սևանա լճի ավազանի քարտեզ,թուղթ և գունավոր մարկերներ
Ամբողջական պատկեր և դասի նպատակ	Սովորողները գիտեն Սևանա լճի դիրքադրության մասին, կիմանան Սևանա լճի առանձնահատկությունների մասին, գիտելիքները կօգտագործեն Սևանա լճի ջրային շրջափուլի ուսումնասիրման ժամանակ, կկարողանան բացատրել այն:
Վերջնարդյունքներ	Ա-մակարդակ՝ սովորողները կկարողանան նկարագրել Սևանա լճի աշխարհագրական

	դիրքը,ռելիեֆը,թվարկել և քարտեզի վրա ցույց տալ Սևանա լճի ափամերձ լեռները,թերակղզիները,Սևանա լիճ թափվող գետերը, կիմանա լճի առավելա-գույն խորությունը: Բ-մակարդակ՝ սովորողները կկարողանան բացատրել ինչ է ջրային հաշվեկշիռը,սակայն բացատրություններն ունեն որոշակի հղկման կարիք,կներկայացնեն բնապահպանական հիմնախնդիրները և կառաջարկեն լուծումներ,կկարողանան աշխատել ուրվագծային քարտեզով: Գ-մակարդակ՝ սովորողները կկարողանան հաշվարկել լճի ջրային հաշվեկշիռը՝ ջրի մուտքը և ելքը,հետազոտական աշխատանքի միջոցով ինքնուրույն գիտելիքներ ձեռք կբերեն՝ՋՀԱ-ի կառուցում և ուսումնասիրում:
Դասի ընթացք /ընտրված մեթոդներ/	Մեթոդներ՝ շրջագայություն պատկերասրահում,մտքերի տարափ Կազմակերպչական մաս-հին նյութի հարցում/ամրապնդում/-10 րոպե, Խթանման փուլ-/մտքերի տարափ/մեթոդ-7-10 րոպե,Սևանա լիճ հասկացության տակ հավաքագրվում է մտքերը առանց մեկնաբանության, Իմաստի ընկալման փուլ-

	/շրջագայություն պատկերասրահում/մեթոդ-15ր., խմբային աշխատանք/4 խումբ հետազոտական/՝ <<աշխարհագրագետ-ների>>,<<պատմաբանների>>,<<գրական ագետների>>,<<բնապահպանների>>: Կշռադատման փուլ-/առաջադրանքների ներկայացում/մեթոդ-10 րոպե խմբերը ներկայացնում են իրենց հավաքագրած աշխատանքները,միաժամա-նակ կատարվում է գիտական համեմատություն՝ Վենի դիագրամի միջոցով:
Տերմիններ	Սևանա լիճ,ֆիզիկաաշխարհագրական դիրք,տեկտոնահրաբխային ծագում, Գավառագետ,Արգիճի, Վարդենիկ,Մասրիկ,Ծակքար,Զկնագետ, Արփա-Սևան ջրատար թունել,ջրի շրջափուլ,ջրային հաշվեկշիռ,Հրազդան գետ,ջրհավաք ավազան
Տնային աշխատանք	Ջրային շրջափուլի չլրացված նյութի վրա աշխատել գունաներկել և վերնագրել ջրային շրջափուլի կարևոր փուլերը,աշխատել ուրվագծային քարտեզում,կատարել առաջադրանք 3,4 հարցերը էջ 59

Օրվա դասի պլան 2 ամիս, ամսաթիվ՝ 09.03.2022թ.

Ուսուցիչ՝ Մ.Հովագիմյան	Աշխարհագրություն
Դասարան և կիսամյակ	**2-րդ** կիսամյակ 9-րդ
Խմբի նկարագիր	:Դասարանում սովորում են 19 աշակերտ,որոնցից 9-ը աղջիկներ են,իսկ 10-ը՝ տղաներ:
Թեմայի գլուխ և թեմա	Սևանա լիճ. <<Ջրային հաշվեկշիռ>>
Օգտագործվող նյութեր	Դասագիրք-Հայաստանի աշխարհագրություն /հեղինակներ՝ Մ. Մանասյան,Ա. Հովսեփյան-Երևան՝ 2020/:ՀՀ ֆիզիկական քարտեզ,Սևանա լճի ավազանի քարտեզ,թուղթ և գունավոր մարկերներ
Ամբողջական պատկեր և դասի նպատակ	Սովորողները գիտեն Սևանա լճի դիրքադրության մասին, կիմանան Սևանա լճի առանձնահատկությունների մասին, գիտելիքները կօգտագործեն Սևանա լճի ջրային շրջափուլի ուսումնասիրման ժամանակ, կկարողանան բացատրել այն:
Վերջնարդյունքներ	Ա-մակարդակ՝ սովորողները կկարողանան նկարագրել Սևանա լճի աշխարհագրական դիրքը,ռելիեֆը,թվարկել և քարտեզի վրա ցույց տալ

	Սևանա լճի ափամերձ լեռները,թերակղզիները,Սևանա լիճ թափվող գետերը, կիմանա լճի առավելագույն խորությունը: Բ-մակարդակ՝ սովորողները կկարողանան բացատրել ինչ է ջրային հաշվեկշիռը,սակայն բացատրություններն ունեն որոշակի հղկման կարիք,կներկայացնեն բնապահպանական հիմնախնդիրները և կառաջարկեն լուծումներ,կկարողանան աշխատել ուրվագծային քարտեզով: Գ-մակարդակ՝ սովորողները կկարողանան հաշվարկել լճի ջրային հաշվեկշիռը՝ ջրի մուտքը և ելքը,հետազոտական աշխատանքի միջոցով ինքնուրույն գիտելիքներ ձեռք կբերեն՝ՋՀԱ-ի կառուցում և ուսումնասիրում:
Դասի ընթացք /ընտրված մեթոդներ/	Մեթոդներ՝ շրջագայություն պատկերասրահում,մտքերի տարափ Կազմակերպչական մաս-հին նյութի հարցում/ամրապնդում/-10 րոպե, Խթանման փուլ-/մտքերի տարափ/մեթոդ-7-10 րոպե,Սևանա լիճ հասկացության տակ հավաքագրվում է մտքերը առանց մեկնաբանության, Իմաստի ընկալման փուլ-/շրջագայություն պատկերասրահում/մեթոդ-15ր., խմբային աշխատանք/4 խումբ հետազոտական/՝ <<աշխարհագրագետ-

	ների>>,<<պատմաբանների>>,<<գրականագետների>>,<<բնապահպանների>>: Կշռադատման փուլ-/առաջադրանքների ներկայացում/մեթոդ-10 րոպե
խմբերը ներկայացնում են իրենց հավաքագրած աշխատանքները,միաժամա-նակ կատարվում է գիտական համեմատություն՝ Վենի դիագրամի միջոցով:	
Տերմիններ	Սևանա լիճ,ֆիզիկաաշխարհագրական դիրք,տեկտոնահրաբխային ծագում, Գավառագետ,Արգիճի, Վարդենիկ,Մասրիկ,Ծակքար,Զկնագետ,Արփա-Սևան ջրատար թունել,ջրի շրջափուլ,ջրային հաշվեկշիռ,Հրազդան գետ,ջրհավաք ավազան
Տնային աշխատանք	Ջրային շրջափուլի չլրացված նյութի վրա աշխատել գունաներկել և վերնագրել ջրային շրջափուլի կարևոր փուլերը,աշխատել ուրվագծային քարտեզում,կատարել առաջադրանք 3,4 հարցերը էջ 59